կարելի էր քշել, վախեցնելով, կլոր պար պարելով և պարի մեջ ոտք զարկելով.

աղմուկ բարձրացնելով.

հրացան արձակելով ծանր տղաբէրի, հարսանիքի, արևի կամ լուսնի խավարման ժամանակ.

կարելի էր խաբել՝ կնոջ ջիգëրի փոխարեն այծի ջիգëրը դուրս շպրտելով, երեխային յոթ տնից վերցրած կտորներից շոր կարելով, երեխային թուրքի անուն դնելով, իբր թե ոչ թե այդ տան, այլ թուրքի զավակ է և այլն:

Քաշկէրից սպառնացող վտանգների առաջն առնել կարելի էր, դիմելով հատուկ զորություն ունեցող իրերին և գծագրումներին: Եթե այդ իրերն ու գծագրումները դասավորելու լինենք ըստ նախնական մարդու տնտեսական զարգացման զանազան փուլերի հաջորդականության՝ այդ շարքում առաջին դերը պետք է հատկացնել ածուխին, ապա՝ աղին, հացին և շրջանի ու խաչի գծագրումներին:

Կրակը մարդկության ամենասկզբնական գյուտերից մեկն է և շատ վաղ ապացուցել է ոչ միայն իր ոչնչացնող զորությունը, այլև եփած, խորոված մթերքները փտումից և փչացումից երկարատև պահպանելու ունակությունը և առավելապես գիշերվա մթությունը ցրելու առանձնահատկությունը: Ամենանախնական ժամանակներից կրակին պիտի վերագրվեր չար և գիշերվա մթության մեջ արթուն ոգիներին հալածող, վանող և ոչնչացնող զորություն: Միայն Զանգեզուրում չէ, այլև ուրիշ հայաբնակ գավառներում, նաև ուրիշ ժողովուրդների մեջ, չարը վանող և պաշտպանող զորություն էր վերագրվում նույնպես կրակի փոխանորդ՝ ածուխին:

Հում կաթը փոխ չէին տալիս, իսկ եթե տալիս էին, մեջը պիտի մի կտոր ածուխ դցեին, որ կաթը չպակասի: Ենթադրվում էր, որ հում կաթի մեջ fաշկը բնակվում էր և փոխ տալուց դժգոհելով, կարող էր վրեժխնդիր լինել: Ինչպես տեսանք՝ երեխային մթնելուց հետո դուրս տանելիս, ձեռքը ածուխ էին դնում: Ածուխ էին դնում նրա գլխատակին:

Ածուխը ձեռքն էին վերցնում կախարդական բառերով աղոթելիս:

Աղն էլ գիշերը փոխ չէին տալիս:

Աղն էլ շորի մեջ փաթաթած դնում էին նորածնի գլխի տակ կամ կախում բրորոցից: Հավատում էին, որ երկուսն էլ պահում էին չար աչքից:

Երեխայի վրա ծնվելուն պես աղ էին ցանում fաշկէրից պահպանելու համար և ոչ թե առողջապահական նպատակով, ինչպես այդ շատերը ձգտում են բացատրել: Ծննդկանի մոտ մտնելիս ամեն մի այցելու ձեռքը աղի կճուճի վրա պիտի դներ, որպեսզի իր հետ fաշկէրին էլ ներս չբերի:

Աղին այդ զորությունը վերագրելը սկիզբ է առել այն նախնական ժամանակաշրջանից, երբ միսը արդեն դարձել էր մարդու գլխավոր կերակուրը և որսորդության զարգացման հետ միաժամանակ փորձը ապացուցել էր աղի կարևորությունը ոչ միայն միսն ավելի դյուրամարս կամ համեղ դարձնելու, այլ, որ ավելի կարևոր էր, աղած վիճակի մեջ ավելի երկար պահելու՝ փտելուց, հոտելուց ապահովելու համար:

Եթե աղին քաշքաշան՝ fաշկէրը վանելու զորություն հատկացնելը հնարավոր է շաղկապել առավելապես նախնական որսորդական կյանքի գերիշխող մտայնության հետ, ապա նույն տեսակ մագիկ զորություն հացին հատկացնելը պիտի կապել տնտեսական զարգացման այն ժամանակամիջոցի հետ, երբ